600.0366.29.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2016 թվականի №366Ա

քաղ. Երևան

«ՇՏԱՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2008 թվականի հոկտեմբերի 22-ի «ՇՏԱՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №569Ա որոշմամբ «ՇՏԱՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0461 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 4-ի №ԱԲ-544Հ, հուլիսի 6-ի №ԱԲ-1373Հ և հոկտեմբերի 5-ի №ԱԲ-1950Հ գրություններով,

դ) ընկերության կողմից օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի նոյեմբերի 1-ին հանձնաժողովը վերջինիս

նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2016 թվականի նոյեմբերի 1-ի №ԱԲ-2125Հ գրությամբ,

ե) ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերությունը խախտել է օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2016 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ կազմում է չորս հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քսանհինգ դրամ, որից երեք հարյուր հազար դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քսանհինգ դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և՝

հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել №0461 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը հաշվարկված չորս հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քսանհինգ դրամ պարտքը, որից երեք հարյուր հազար դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քսանհինգ դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 նոյեմբերի 2016թ.